

Տեղեկանք

ՀՀ մարզերի համայնքներում 2010 թվականի ընթացքում իրականացված վարչական և ֆինանսական հսկողության արդյունքում կազմված ակտերում արձանագրված խախտումների վերաբերյալ

ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 23.02.2010թ «Վարչական հսկողության 2010 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N34-Ա հրամանի համաձայն նախատեսվել է հսկողություն իրականացնել ՀՀ 10 մարզերի՝ ՀՀ Արարգածոտնի մարզ՝ 26, ՀՀ Արարատի մարզ՝ 12, ՀՀ Արմավիրի մարզ՝ 10, ՀՀ Գեղարքունիքի մարզ 26, ՀՀ Լոռու մարզ՝ 22, ՀՀ Կոտայքի մարզ՝ 21, ՀՀ Շիրակի մարզ՝ 47, ՀՀ Սյունիքի մարզ՝ 14, ՀՀ Վայոց Ձորի մարզ՝ 10 և ՀՀ Տավուշի մարզ՝ 22 համայնքներում: Հսկողությունն իրականացվել է աշխատանքային ծրագրին համապատասխան, բացառությամբ ՀՀ Արարատի մարզի Այնթափ համայնքի՝ որտեղ հսկողություն չի իրականացվել հիմք ընդունելով «տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ պարբերության պահանջը՝ այն է ստուգումների անցկացումը համայնքներում արգելվում է ընտրություններից մեկ ամիս առաջ և մինչև դրանց պաշտոնական ավարտը:

Ստորև ներկայացվում է հսկողության արդյունքում արձանագրված խախտումների վերաբերյալ տարեկան կտրվածքով տեղեկատվությունն՝ ըստ մարզերի:

ՀՀ Արարատի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 12 համայնքների ղեկավարների և ավագանու կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները.

<Նախադպրոցական կրթության մասին> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի Ուրցածոր գյուղի մանկապարտեզը չի վերակազմավորվել համայնքային ոչ առևտրային կազմվերպության:

<Առևտրի և ծառայությունների մասին> ՀՀ օրենքի 17.1 հոդվածի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողությունն իրականացվում է սույն օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում:

<Գնումների մասին> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, համաձայն որի շինարարական աշխատանքների գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Առանց նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության՝ շինարարական աշխատանքների կատարման համար գումարներ նախատեսվել չեն կարող:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվություն:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 34րդ 1-ին կետի և 69-րդ հոդվածի 1-ին

մասի պահանջները, համաձայն որոնց համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ անգամ Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետում բյուջեի ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն:

ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի «Ռոզելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն տալու կարգը հաստատելու մասին» թիվ 843-Ն որոշման պահանջները:

ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 750-ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 9-րդ կետի պահանջը, համաձայն որի գույքային հարկերի վճարումները կանխիկ ընդունվում են վճարումների ընդունման անդորրագրով (այսուհետ՝ անդորրագիր): Անդորրագիրը լրացվում է գրիչով և ընթերցելի: Անդորրագրում պարտադիր լրացվում են դրանում նշված բոլոր վավերապայմանները:

ՀՀ կառավարության 2009թ. դեկտեմբերի 17-ի թիվ 1521-ն որոշման 6-րդ և 7-րդ կետերի պահանջները, այն է պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները ոչ մեկի չի վերապահվել, չի կազմվել և հաստատվել գնման ձևի առաջարկ:

ՀՀ Տավուշի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 22 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները.

<Գանձապետական համակարգի մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի բ ենթակետի լիազոր պահանջը, համաձայն որի մարմնի կողմից սահմանված ներքին աուդիտի անցկացման կարգին համապատասխան՝ գլխավոր ֆինանսիստը ապահովում է ներքին աուդիտի համակարգի առկայությունը, որը ներառում է պետական մարմնում և համակարգի պետական հիմնարկներում ֆինանսական հարցերի վերաբերյալ հաստատված ակտերի պահանջների կատարման գնահատումն ու հաշվապահական հաշվառման գրանցումների մեջ անհամապատասխանությունների բացահայտումը և դրանց ճշգրտման ապահովումը:

<Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի գ ենթակետի պահանջը, համաձայն որի համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը՝ յուրաքանչյուր տարվա համայնքի բյուջեի սույն օրենքի 28-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր բաղկացուցիչ մասում նախատեսված հաշվարկային-դրամարկղային ելքերի հանրագումարը չպետք է գերազանցի համայնքի բյուջեի համապատասխան մասում տվյալ տարում նախատեսված հաշվարկային-դրամարկղային մուտքերի հանրագումարին.

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի պահանջները:

<Գնումների մասին> ՀՀ օրենքի պահանջի խախտումներով են իրականացվել ապրանքների և ծառայությունների գնման գործընթացը:

ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 750-ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 10-րդ կետի բ ենթակետի պահանջը, համաձայն որի համակարգողը, անդորրագրերին համապատասխան կանխիկ ընդունված գումարներն առանձնացնելով ըստ հարկատեսակների, դրանք բանկի կանխիկ մուտքի անդորրագրերով (պարտադիր նշելով համայնքի անվանումը)՝ սահմանված կարգով մուտքագրում է տվյալ համայնքն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի (ՏԳԲ) համապատասխան գանձապետական հաշվին՝ գյուղական համայնքներում (մուտքերն ընդունող բանկից համայնքի հեռավորությունից կախված) վճարումներ ընդունողից գումարի ստացման օրվան հաջորդող 3 օրվա ընթացքում:

<Դրամարկղային գործառնությունների մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի գանձապահին իրականացնում է կանխիկ դրամի ընդունումը (մուտքագրումը) կազմակերպության դրամարկղ և բացթողումը (ելքագրումը) կազմակերպության դրամարկղից:

ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի պահանջը, համաձայն որի հողամասերը վարձակալության տրամադրվում են մրցույթով՝ բացառությամբ սույն որոշմամբ սահմանված դեպքերի

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002թ. Դեկտեմբերի 30-ի <<ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև վերջիններիս ենթակա հիմնարկներում ներքին աուդիտի անցկացման կարգը հաստատելու մասին>>թիվ 934-Ն հրամանի պահանջները:

ՀՀ Գեղարքունիքի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 26 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները.

Հողային օրենսգրքի 76-80 հոդվածների պահանջները:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի իրավական ակտերը պետք է հղում պարունակեն թե՛ նորամատիվ որ իրավական ակտի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում:<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 37-րդ, 40-րդ, 41-րդ հոդվածների պահանջները:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը, դրանք ընդունելուց հետո՝ սահմանված ժամկետներում, պետական իրավական փորձաքննության համար ուղարկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն: Նշված ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն չուղարկված նորմատիվ ակտերը համարվում են անվավեր:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկաարը օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի պահանջը, համաձայն որի աշխատակազմի քարտուղարը կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկաարը կատարում է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկում է միջոցներ:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջները:

ՀՀ Լուռու մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 22 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները.

ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց երեք օր առաջ:

ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի եթե աշխատանքային պայմանագրի լուծման հետևանքով ամենամյա արձակուրդի իրավունք ձեռք բերած աշխատողին չի կարող տրամադրվել ամենամյա արձակուրդ, կամ աշխատողը չի ցանկանում դրա տրամադրումը, ապա նրան վճարվում է դրամական հատուցում:

<Պնակների մասին> ՀՀ օրենքի պահանջի խախտումներով են իրականացվել ապրանքների և ծառայությունների գնման գործընթացը:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր:

<Առևտրի և ծառայությունների մասին> ՀՀ օրենքի 17.1 հոդվածի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առ ծառայությունների ոլորտում հսկողությունն իրականացվում է սույն օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում:

<Տեղական տուրքերի և վճարների մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, համաձայն որոնց տեղական տուրքերի դրույթաչափերը, սույն օրենքով նախատեսված դրույթաչափերի սահմաններում, սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ: Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի միասնական դրույթաչափեր: Ընթացիկ տարվա համար տեղական տուրքի դրույթաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

<Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը, համաձայն որի համայնքային ծառայության պաշտոնի նշանակման հետ միաժամանակ ծառայողին շնորհվում է համայնքային ծառայության համապատասխան դասային աստիճան, եթե նա չունի քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության ավելի բարձր դասային աստիճան:

<Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի ը ենթակետի պահանջը, համաձայն որի համայնքային ծառայողին պաշտոնից ազատելու հիմք է իր գրավոր համաձայնությամբ այլ պաշտոնում ընտրվելը կամ նշանակվելը կամ համայնքային ծառայողի պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի անցնելը:

<Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, համաձայն որոնց <խիստ նկատողություն վերջին նախազգուշացումով> կարգապահական տույժ գոյություն չունի:

ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի <<Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն տալու կարգը հաստատելու մասին>> թիվ 843-Ն որոշման պահանջները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի պահանջները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2009 թ. հունվարի 26-ի թիվ 05-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների գրանցամատյանի վարման կարգի պահանջը, մասնավորապես տեղեկատվություն չի ներկայացրել համայնքային ծառայողի՝ կարգապահական տույժի ենթարկված լինելու մասին:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թ. օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված կարգի 2-րդ գլխի՝ մրցույթի մասին հայտարարությունը, պահանջները:

ՀՀ Շիրակի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 47 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները.

Համայնքի ղեկավարը չի կատարել համայնքի 2009-2012 թթ. ճրագրով նախատեսված աշխատանքները:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի պահանջը, համաձայն որի քարտուղարի կողմից ավագանու որոշումները 7-օրյա ժամկետում առաքվում են մարզպետարան:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, համաձայն որի համայնքի սեփականություն համարվող գույքը համայնքի ղեկավարը ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը, դրանք ընդունելուց հետո՝ սահմանված ժամկետներում, պետական իրավական փորձաքննության համար ուղարկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն: Նշված ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն չուղարկված նորմատիվ ակտերը համարվում են անվավեր:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի իրավական ակտերը պետք է հղում պարունակեն թե՛ նորմատիվ որ իրավական ակտի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը, համաձայն որի իրավական ակտում կիրառվող ամսաթվերում տարեթիվը և ամսաթիվը գրվում են թվերով, իսկ ամիսը՝ տառերով:

<Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվում են համապատասխան համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու մինչև հինգ անդամներ և մարզպետարանի երեք ներկայացուցիչ: Համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշում է համայնքի ավագանին: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է իր որոշմամբ հանձնաժողովի կազմում լրացուցիչ ընդգրկել համապատասխան մասնագետի: ՀՀ կառավարության 2003 թ. հոկտեմբերի 6-ի թիվ 1408-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ գլխի 4-րդ կետի պահանջը, համաձայն որի Կազմակերպության դրամարկղ կանխիկ դրամի մուտքագրման (ընդունման) փաստաթղթավորումը կատարվում է «Հաշվապահական հաշվառման մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան հաշվապահական հաշվառումը վարող ստորաբաժանման կամ անձի, ինչպես նաև կազմակերպության ղեկավարի կողմից լիազորված այլ անձի (այսուհետ՝ հաշվապահություն) կողմից՝ դրամարկղային մուտքի օրդերով (ձև N 1՝ ԴԻ-1) (այսուհետ՝ մուտքի օրդեր): Մուտքի օրդերն ունի կտրվող մաս՝ անդորրագիր: Մուտքի օրդերի ձախ մասն ստորագրվում է գլխավոր հաշվապահի կամ կազմակերպության ղեկավարի կողմից լիազորված այլ անձի (այսուհետ՝ հաշվապահ), գանձապահի կամ նրա պարտականությունները կատարող անձի (այսուհետ՝ գանձապահ) և վճարողի, իսկ աջ մասը՝ անդորրագիրը, ստորագրվում է հաշվապահի և գանձապահի կողմից: Ստորագրված մուտքի օրդերը կնքվում է գանձապահի դրոշմակնիքով կամ կազմակերպության կնիքով՝ այնպես, որ միաժամանակ կնքված լինեն մուտքի օրդերի և՛ ձախ մասը, և՛ աջ մասը (անդորրագիրը), որից հետո այն տրվում է դրամը վճարողին:

ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 750-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 9-րդ կետի պահանջը, համաձայն որի գույքային հարկերի վճարումները կանխիկ ընդունվում են վճարումների ընդունման անդորրագրով (այսուհետ՝ անդորրագիր): Անդորրագիրը լրացվում է գրիչով և ընթերցելի: Անդորրագրում պարտադիր լրացվում են դրանում նշված բոլոր վավերապայմանները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի պահանջները:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002թ. Դեկտեմբերի 30-ի <<ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև վերջիններիս ենթակա հիմնարկներում ներքին աուդիտի անցկացման կարգը հաստատելու մասին>> թիվ 934-Ն հրամանի պահանջները:

ՀՀ Արագածոտնի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 26 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները.

<Վնումների մասին> ՀՀ օրենքի պահանջի խախտումներով են իրականացվել ապրանքների և ծառայությունների գնման գործընթացը:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության պահանջը, համաձայն որի անհատական կամ ներքին իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի, թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում:

ՀՀ Սյունիքի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 14 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները.

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12¹-րդ հոդվածի /տեղեկացում համայնքի ավագանու նիստերի մասին/ պահանջները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի պահանջները:

ՀՀ կառավարության 11.07.2002թ N1146-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 2-րդ կետի պահանջը, համաձայն որի. իրավական ակտն ընդունող մարմինները պարտավոր են պահել իրենց ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան:

ՀՀ Վայոց Ձորի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն մարզի 10 համայնքների ղեկավարների և ավագանու կողմից իրականացված լիազորությունների նակատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները.

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, համաձայն որի իրավական ակտի հերթական համարը սահմանում է իրավական ակտն ընդունող մարմինը՝ միայն արաբական թվանշաններով: Համարների հերթականությունը վերակալում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից: Գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը պետք է համարակալվեն միայն ամբողջական թվանշաններով:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 69-րդ և <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ անգամ Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությանը սահմանված ժամկետում բյուջեի ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն, իսկ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի համայնքի ավագանու նիստերը անցկացվում են ոչ պակաս քան 2 ամիսը մեկ անգամ:

<Գնումների մասին> ՀՀ օրենքի պահանջի խախտումներով են իրականացվել ապրանքների և ծառայությունների գնման գործընթացը

Դրամարկղային գործառույթները իրականացվել են ՀՀ կառավարության 2003թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1408-Ն որոշմամբ հաստատված կարգի խախտմամբ:

ՀՀ Կոտայքի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 21 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները.

ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի պահանջի 1-ին մասի, 2-րդ պարբերության պահանջը համաձայն որի ոչ աշխատանքային տոնական և հիշատակի օրերը, որոնք համընկնում են ամենամյա արձակուրդի ժամանակահատվածին, արձակուրդի օրացուցային օրերի մեջ չեն ընդգրկվում և չեն վճարվում:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը ենթակա են պարտադիր պաշտոնական հրապարակման:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը, դրանք ընդունելուց հետո՝ սահմանված ժամկետներում, պետական իրավական փորձաքննության համար ուղարկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն: Նշված ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն չուղարկված նորմատիվ ակտերը համարվում են անվավեր:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության պահանջը, համաձայն որի անհատական կամ ներքին իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի, թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը, համաձայն որի իրավական ակտում կիրառվող ամսաթվերում տարեթիվը և ամսաթիվը գրվում

են թվերով, իսկ ամիսը՝ տառերով:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջը, համաձայն որի ավագանու անդամը պարտավոր է մասնակցել ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություններին:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի պահանջը, համաձայն որի քարտուղարի կողմից ավագանու որոշումները 7-օրյա ժամկետում առաքվում են մարզպետարան:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի պահանջը, համաձայն որի քարտուղարի կողմից ավագանու որոշումները 7-օրյա ժամկետում առաքվում են մարզպետարան:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 17-րդ մասի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին հաստատում է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման 6-րդ կետի պահանջը, համաձայն որի տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո 3 օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում հաստատված թույլտվությունը, որը տրվում է հայտատուի կողմից վճարված տեղական տուրքին համապատասխանող ժամկետով՝ վճարման օրվանից:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում:

<Առևտրի և ծառայությունների մասին> ՀՀ օրենքի 17.1 հոդվածի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողությունն իրականացվում է սույն օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում:

ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1408-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ մասի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի մուտքի և ելքի օրդերները համարակալվում են առանձին, այսինքն՝ մուտքի օրդերները համարակալվում են առանձին հերթականությամբ, իսկ ելքի օրդերները՝ առանձին: Համարակալումները վերսկսվում են յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:

ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջը, համաձայն որի օտարված, կառուցապատման կամ օգտագործման տրամադրված հողամասերի համար համայնքի ղեկավարի, մարզպետի (ըստ հողամասի գտնվելու վայրի) միջոցով կազմվում է հողաշինարարական գործ, որում ներառվում են իրավասու մարմինների որոշումները հողամասերի օտարման, կառուցապատման կամ օգտագործման տրամադրման մասին, հողամասի՝ սահմանված կարգով կազմված հատակագիծը՝ նշելով նպատակային ու գործառնական նշանակությունը, հողատեսքերը և հողամասերի չափերը, օտարման, կառուցապատման կամ օգտագործման տրամադրման պայմանագրերի մեկական օրինակ:

ՀՀ կառավարության 11.07.2002թ N1146-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 2-րդ կետի պահանջը, համաձայն որի. իրավական ակտն ընդունող մարմինները պարտավոր են պահել իրենց ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի պահանջները:

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 10 համայնքի ղեկավարի և ավագանու կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները.<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, համաձայն որի քարտուղարը նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը նիստն սկսվելուց առնվազն յոթ օր առաջ տրամադրում է ավագանու անդամներին:

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին սահմանված կարգով հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը

<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 17-րդ մասի պահանջը համաձայն որի համայնքի ավագանին հաստատում է առևտրի, հասարակական մենդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները՝ օրենքով սահմանված կարգով.

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի> մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, համաձայն որի վարչական վարույթի վերաբերյալ գործերի և դրանց հաշվառման գրանցամատյանների, ինչպես նաև վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանի վարման կարգն ու պայմանները սահմանում է վարչական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած օրինակելի կարգի հիման վրա:

ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 750-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 10-րդ կետի բ ենթակետի պահանջը, համաձայն որի համակարգողը, անդորրագրերին համապատասխան կանխիկ ընդունված գումարներն առանձնացնելով ըստ հարկատեսակների, դրանք բանկի կանխիկ մուտքի անդորրագրերով (պարտադիր նշելով համայնքի անվանումը)՝ սահմանված կարգով մուտքագրում է տվյալ համայնքն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի (ՏԳԲ) համապատասխան գանձապետական հաշվին՝ գյուղական համայնքներում (մուտքերն ընդունող բանկից համայնքի հեռավորությունից կախված) վճարումներ ընդունողից գումարի ստացման օրվան հաջորդող 3 օրվա ընթացքում:

<Դրամարկղային գործառույթների մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի գանձապահն իրականացնում է կանխիկ դրամի ընդունումը (մուտքագրումը) կազմակերպության դրամարկղ և բացթողումը (ելքագրումը) կազմակերպության դրամարկղից: